

Տէրտէ՛ր մի «հա՛յրը մեր» սասա՛ւ. ոչ թէ «հայր մեր», այլ՝ «հայրը մեր»: Արդ՝ հին արտասանութեան հետաւոր մնացորդը չէ՞ սա, որ ապրում է մինչեւ այսօր: Ես կասկած չունիմ, որ հին ժամանակ արտասանում էին հա՛յրը, ինչպէս նրանից շատ առաջ՝ հա՛յար, իսկ աւելի վաղ հա՛դար կամ փա՛դար:

Արդ՝ այր բառը կը լուծւի է յուն. aner բառին, որ մարդ է նշնակում: Ես նկատած եմ, որ մեր լեզուի մէջ նի-ն ա եւ ե ձայնաւորների միջեւ երբեմն դառնում է յ. այսպէս հրաւման, բայց՝ հրաւմայել եւ ոչ հրաւմանի: Այս հաշուով յուն. aner բառը կարող էր կընել հայերէն մի նախաւոր ձեւի հետ իբր՝ այէր: Այս բառի շեշտը մեր լեզուի մէջ առաջին վանկի վրայ լինելով՝ պիտի սղէր իր երկրորդ ձայնաւորը եւ դառնար ա՛յրը, որ հիմա արտասանում ենք ա՛յր: Ընդունելով, որ երգի յօրինման ժամանակ եւ մինչեւ իսկ յետագայ Ե. եւ է. դարերում այդ բառն արտասանում էին այրը, այսինքն ոչ թէ մի, այլ երկու վանկով՝ մենք կարող ենք երգի տողին այս տառադարձութիւնը տալ.

Քեեզ սսեմ այրը քաջ Արտաշէս,
որ կարելի էր տրոհել երկու կերպ, նայած թէ միւս տողերի մանր հետազօտութիւնն ի՛նչ արդիւնք կը տայ: Կամ՝

Քե՛զ սսեմ այրը | քաջ Արտաշէ՛ս. 6+5=
11 կամ թէ՛
Քե՛զ սսեմ ա | յրը քաջ Արտաշէ՛ս 5+6
= 11

Այսպէս ահա մի տող, որ այսօրուս արտասանութեամբ ութ վանկ է, մանր քննութիւնից յետոյ դարձաւ տասնութէկ վանկ:

Հետեւեալ հարցումը ամենից կարեւորն է: Մեր հնագոյն տաղաչափութիւնը վանկայի՞ն էր թէ շեշտական:

Երբ «հինքն Արամազնեայց» տաղ էին ոլորում՝ այդեօք վանկե՞րն էին հաշուում թէ նաեւ շեշտած եւ անշեշտ լինելը նկատի առնում: Հ. Ա. Բագրատունին, որ քննութեան է առնում հայկական կոչուած տաղաչափութիւնը, առանց սակայն նկատի առնելու Գողթան երգերը, կարծում է, որ մեր տաղաչափները ոչ թէ վանկերի թիւը, այլ հատածներն ունէին նկատի: «Այս ազգ ոտանաւորաց ոչ զվանկից՝

այլ զանդամոցն թիւս միայն չափէ եւ հաստատուն պահէ» գրում է նա*): Գուցէ նկատի ունէին ե՛ւ շեշտը, ե՛ւ վանկերի թիւը, ե՛ւ հատածների հաշիւը: Խնդիրը մութն է եւ պէտք է հետազօտուի նախապէս: Օրինակ՝ մեր Թաղման կարգի այն շարականը, որ երգում են իբր ազգանշան գերեզմանի փոսը լցնելու, եւ որ տրհւում է այսպէս.

Ընդ Քրիստոսի		պահելով՝
Յաղթող լիցուք		փորձողին.
եւ ընդ հրեշտակս		երգեսցուք
փառք ի բարձունս		Աստուծոյ.

Չէ՞ր կարելի կարգաւ եւ արտասանել նաեւ այս տարազով.

v — v — | — v —

Շարականի եղանակը գնում է այս ելեւէջով: Իմացողները կարող են ստուգել մեր սածը, երգելով իրենց մաքում եւ շեշտելով մեր տուած տարազի երկարները: Այս խնդրի քննութեան ժամանակ պէտք է նկատի ունենալ մանաւանդ մեր զեղջուկ երգերի տաղաչափութիւնը: Մեր հնագոյն երգերի տաղաչափութեան խնդիրն այսպիսով կապւում է մեր լեզուի շեշտազօտութեան բարդ հարցի հետազօտութեան:

Ընդունենք մի վայրկեան թէ մեր տաղաչափութիւնն եղած է շեշտական եւ այդ հիման վրայ փորձենք կարգաւ Շարայի առասպելը է Խորենացին գրում է. «Թուի արդարանալ առասպելին, որ ասի ի մէջ զեղջկաց. «Թէ քո Շարայի որկորն է՝ ասեն, մեր Շիրակայ ամբարքն չեն» (ա, ժք): Ընդունենք որ շատ առածների նման սա եւս հաւասար մասերից է կազմուած. ինչպէս՝ «Ով կարգայ՝ նա մարդ ա». կամ՝ «Շատ անողին շալ շապիկ, | քիչ անողին ալ շապիկ»: Թէ եւ Մ. Արեղեան չակերտը գրած է քէ բառի առջեւ, որով այդ բառը համարում է առածի մասը, բայց մենք համաչափութեան սիրուն (մանաւանդ որ դրանից բան չի վնասւում) թողնենք այդ քէն եւ Լ. Գրէյի պէս կարգանք.

*) Տես Պորլիոսի Վերգիլեայ Մարովնի — Մշակականք. — Վենետիկ. 1847. յառաջաբան, էջ 16: